ՀՏԴ : 93(=915.7)

Doi:10.54503/0135-0536-2023.2-53

ՔՐԴԵՐԻ ԵՎ ՔՐԴՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Բանալի բառեր՝ քրդեր, խալիֆայություն, արևելագետ, Ուռհայեցի, Տիգրիս, Հայաստան:

Նախաբան

Քուրդ ժողովրդի միջնադարյան շրջանի պատմությունը չափազանց վատ է ուսումնասիրված և, ըստ էության, քրդագիտության բաց էջերից մեկն է: Արևելագետ Վլադիմիր Մինորսկու կարծիքով մինչև IX դարը քրդերի պատմությունը պարուրված է անորոշության մշուշով[1]: Դրա հիմնական պատճառն աղբյուրների սղությունն է կամ գրեթե բացակայությունը: Արաբական աղբյուրներն անդրադառնում են քրդերի պատմությանը՝ սկսած Օմայան խալիֆայության շրջանից (661–750 թթ.): Ավելի վաղ հիշատակումներ մեզ չեն հասել, հավանաբար, դրանց բացակայության պատճառով: Ուշագրավ է նշել, որ Օմայան և նրան հաջորդած Աբբասյան խալիֆայության (750–1258 թթ.) ժամանակաշրջանի արաբ բոլոր պատմիչների, տարեգիրների, աշխարհագրագետների, ճանապարհորդների և այլ երկերում առհասարակ բացակայում է «Քրդստան» անվանումը:

Միջնադարյան արաբական աղբյուրներում առկա են քրդերի վերաբերյալ միայն որոշ հիշատակումներ[2]: Հանդիպում է, օրինակ, «ալ-Ջիբալ ալ-աքրադ» բառակապակցությունը, որը բառացիորեն նշանակում է «քրդական լեռներ», երբեմն՝ նաև «ալ-աքրադ» («քուրդ», «քրդական») ձևերը[3]: Արաբ աշխարհագրագետ Իբն-Հաֆքալը (վախճանվել է 988 թ.), իր «Քիթաբ սուրաթ ալ-արդ» երկում խոսելով «ալ-Ջիբալ» տեղանքի մասին, այն անվանում է «քրդերի ամառային և ձմեռային արոտավայրեր»[4]: Ի դեպ, «արդ ալ աքրադ» («քրդերի հողեր», «քրդական երկրամաս») արտահայտությունը գործածվել է նաև Կենտրոնական Ասիայի թյուրք աշխարհագրագետ, լեզվագետ ու ճանապարհորդ Մոհամմադ Կաշգարիի՝ 1057 թ. կազմած քարտեզում[5]:

---

* *Ներկայացվել է 03. IV. 2023 թ., գրախոսվել է 18. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] Minorsky. 1954, 1134–1135.

[2] James. 2006.

[3] Поладян. 1987, 10.

[4] Ibn-Hawqal, Abi Al-Qasim al-Nusuibi, Kitab Surat al ard. 1979, 239–241.

[5] Eppel. 2016, 10.

Միջնադարյան աղբյուրների հիշատակումները քրդերի մասին

Այսպիսով, արաբական մատենագրության մեջ քրդերի մասին առաջին հիշատակումները հանդես են գալիս սկսած VII–VIII դարերից, ընդ որում, միշտ չէ, որ «քուրդ» բառը էթնիկական իմաստ էր կրում: XIX դարի վերջերից եվրոպական արևելագիտական գրականության մեջ շրջանառվում էր տեսակետ այն մասին, որ արաբալեզու աղբյուրներում «քուրդ» (հոգնակին՝ «աքրաղ») տերմինի տակ նկատի է առնվել նաև ընդարձակ խալիֆայության տարբեր մասերում ապրող իրանալեզու լեռնային վաչկատուն ցեղերին[6] կամ, ընդհանրապես, այն ընկալվել է «քոչվոր», «վաչկատուն», «անասնապահ», «հովիվ», «թափառակենցաղ խաշնարած» իմաստով[7]: Այդ տեսակետը հաստատվում է նաև պարսիկ միջնադարյան հեղինակների բերած վկայություններից: Այսպես, Համզա ալ-Իսֆահանին (X դար) գրում է, որ պարսիկները դեյլեմցիներին[8] անվանում էին «Թաբարիսթանի քրդեր», իսկ արաբներին՝ «Սուրիստանի քրդեր»[9]: Հավանաբար, դրա պատճառն այն է՝ «քուրդ» («քորդ») բառը, որպես «քոչվոր», «անասնապահ» հասկացության հոմանիշ, օգտագործվել է այն ցեղերի վերաբերյալ, որոնք իրենց կենցաղով, վարվելակերպով, զբաղմունքներով ու այլ հատկանիշներով հար և նման էին քրդերին:

Վերոհիշյալ հանգամանքն ուսումնասիրողների առջև դնում է լրացուցիչ դժվարություններ այն առումով, որ համարյա անհնարին է պարզել՝ արաբալեզու աղբյուրներում հանդիպող «քուրդ» տերմինի տակ ո՞ւմ է նկատի առնվել՝ իրական քրդերի՞ն, թե՞ վաչկատուն անասնապահ մեկ այլ ժողովրդի:

Հարկ է նշել, որ «քուրդ» էթնիկական անվանումն անծանոթ է վաղ միջնադարյան հայ պատմիչներին (V դար), ինչպես նաև VII–VIII դդ. հեղինակներ Սեբեոսին և Ղևոնդին: Նույնիսկ X–XI դդ. պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Թովմա Արծրունին և Արիստակես Լաստիվերտցին չեն հիշատակում «քուրդ» էթնոնիմը: Միայն XII–XIII դարերում այն սկսել է հանդիպել ինչպես հայ պատմագրության մեջ, այնպես էլ՝ ձեռագրերի հիշատակարաններում:

Այդ հեղինակներից Մատթեոս Ուռհայեցին առաջինն է, ով իր «Ժամանակագրությունում» 1041–1042 թթ. անցուդարձերի կապակցությամբ հիշատակում է «քուրդ» էթնիկական անվանումը: Իսկ XII դարում «քուրդ» էթնոնիմն արդեն կանոնավոր ավանդվում է հայկական սկզբնաղբյուրներում[10]: Օրինակ՝ XIII դ. հեղինակներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին մինչև XII դ. դեպքերին անդրադառնալիս օգտագործել են «մար», այնուհետև՝ XII դարից սկսած՝ «քուրդ» էթնոնիմները[11]: Իսկ ուշ միջնադարի պատմիչներ Առաքել

---

[6] Nöldeke. 1898, 78–79; Limbert. 1968, 48; Anthony. 1991; Asatrian 2003, 1–58.

[7] Ozoglu. 2007.

[8] *Դեյլեմցիները Կասպից ծովի հարավային լեռնային շրջաններում բնակվող, իրականական ծագում ունեցող հին ժողովուրդ էր:*

[9] Minorsky. 1940, 144–145.

[10] *Մարգարյան. 2019, 244–245:*

[11] *Մարգարյան. 1992, 146–149:*

Դավրիժեցին[12] ու Զաքարիա Սարկավագն[13] արդեն զանգվածաբար գործածում են «մար» և «քուրդ» էթնոնիմները՝ որպես հոմանիշներ:

Նորագույն ուսումնասիրողներից Վլադիմիր Իվանովը համոզիչ ցույց է տալիս, որ «քուրդ» անվանումով միջնադարում բնորոշվում էին իրանալեզու բոլոր քոչվորները, ուստի և այն նույնական չէ ժամանակակից էթնոնիմին[14]:

Արաբական խալիֆայության ողջ շրջանում Քրդստանը երբեք գոյություն չի ունեցել որպես քաղաքական և վարչատարածքային մի ամբողջություն, իսկ քուրդ բնակչությունը ցրված է եղել Առաջավոր Ասիայի տարբեր մասերում՝ անշուշտ, առաձին վայրերում կազմելով հոծ զանգվածներ: Չափազանց բարդ խնդիր է միջնադարում քրդերի բնակության ստույգ արեալի և աշխարհագրական սահմանների որոշումը: Որտե՞ղ է գտնվել Քրդստանը, որո՞նք են նրա սահմանները, ո՞ր տարածքներում են քրդերը բնիկ, որտեղի՞ց են գաղթել և տվյալ վայրում ե՞րբ են հաստատվել: Այս հարցերին պատասխանելը չափազանց դժվար է, քանի որ Քրդստանը չի եղել որոշակի սահմաններ ունեցող երկիր, առավել ևս, որ քրդերը պետականություն չեն ունեցել, որպեսզի հստակորեն ճշտորոշվեին նրա աշխարհագրական սահմանները: Բացի այդ, Քրդստանի աշխարհագրական, լեզվական, պատմական սահմանները քուրդ ժողովրդի գոյության ողջ ընթացքում ներդաշնակ միությամբ չեն համապատասխանել միմյանց, քանի որ դրանք եղել են հարափոփոխ և երբեք հաստատուն վիճակ չեն ունեցել:

Միջնադարյան, մասնավորապես՝ արաբական, սկզբնաղբյուրների հաղորդած չափազանց աղքատիկ տեղեկությունների համաձայն՝ արաբական նվաճումներին նախորդող ժամանակաշրջանում քրդերը բնակվում էին մի տարածքում, որը մոտավորապես համապատասխանում է ժամանակակից Իրաքյան և Իրանական Քրդստանին:

Օմայան խալիֆայության շրջանի պատմաաշխարհագրական գրականության մեջ հանդիպում է «ազ-Զավզան» տերմինը, որը ստուգաբանվում է քրդերեն «զոզանից» և նշանակում է «ամառային արոտավայր»: Այդ անվանումը վկայում է այն մասին, որ խոսքը վերաբերում է վաչկատուն քոչվորական կյանք վարող ժողովրդի մասին: Այստեղից ենթադրվում է, որ աղբյուրներում հիշատակված այդ «զոզանները» հենց քրդերն են: Ընդ որում, արաբական խալիֆայությունում քրդերի բնակության վայրերի մասին խոսելիս արաբ պատմիչների օգտագործած «ազ-Զավզան» և «ալ-Ջիբալ ալ-Աքրադ» անվանումների տակ տարբեր հեղինակներ ընկալել են տարբեր իմաստներ: Մուղադդասին, օրինակ, Զավզանը համարել է Ջազիրե իբն-Օմարի շրջանը: Իբն ալ-Ասիրը Զավզան է համարում այն տարածքը, որը տարածվում էր Մոսուլից երկու օրվա ճանապարհով մինչև Խիլաթի (Ախլաթի) սահմանները և ձգվում էր մինչև Ատրպատական՝ Սալմաստի մոտակայքը: Իսկ Յաղուբի համար Զավզանն այն ընդարձակ նահանգն է, որը գտնվում էր Հայաստանի լեռների,

[12] *Դ ա վ ր ի ժ ե ց ի. 1990, 63, 487:*

[13] *Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն. 1870, 60–61:*

[14] I v a n o v. 1940, 42.

Խիլաթի, Ատրպատականի, Դիյար Բաքրի և Մոսուլի միջև ընկած շրջաններում[15]:

Քուրդ պատմիչ Շարաֆ ալ-Դին Բիթլիսին իր «Շարաֆնամե»-ում Քրդստանի սահմանների մասին խոսելիս, հավանաբար, նկատի ունենալով քրդերի բնակության և քրդական առանձին խմբերի և հավաքականությունների ներկայության աշխարհագրական արեալը՝ ներկայացնում է հետևյալ պատկերը. Հնդկական օվկիանոսի ափերից և Պարսից ծոցի Հորմուզի նեղուցից մինչև Փոքր Ասիայի Մալաթիա և Մարաշ քաղաքները: Նա Քրդստանի կազմի մեջ է ներառում նաև Իրանի հարավում գտնվող Ֆարս նահանգը, Պարսկական Իրաքը, Ատրպատականը, Մեծ Հայքն ու Փոքր Հայքը, Արաբական Իրաքը, Մոսուլը և Դիարբեքիրը[16]:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում՝ սկսած XIII դարի 30–40-ական թվականներից, արաբալեզու աղբյուրները որպես քրդական ցեղերի բնակության վայրեր հիշատակում են Իրանական և Իրաքյան Քրդստանի հետևյալ վայրերը. Հուլվան, Քերմանշահ, Շահրեզուր, Մոսուլ, Ատրպատական, Ֆարս, Խուզեսթան, Ջազիրա, Ջիբալ[17]:

Քրդական ցեղերի տարածման աշխարհագրական սահմաններին անդրադարձել է նաև Մատթեոս Ուռհայեցին: Նա Քրդստան է համարում միայն Ամիդի և Մայյաֆարեքինի (Նփրկերտ, ներկայումս՝ Սիլվան) շրջանների միջև ընկած վայրերը, որոնք տևական ժամանակ մտնում էին Մարվանյանների ամիրայության տիրույթների մեջ[18]: *Ուռհայեցին հաղորդում է, որ քրդերը դեռևս բնակության կայուն շրջան ունեցող էթնոս չեն հանդիսանում, սակայն նրանց բնակության շրջաններն ընդարձակ են:*

Նիկողայոս Ադոնցը պատմական Քրդստանի տարածքի մասին

Ըստ անվանի պատմաբան Նիկողայոս Ադոնցի, պատմական Քրդստանի տարածքն ընդգրկում է հետևյալ երկրամասերը. «... Զագրոսի լեռնաշղթայի լայնածավալ բարձրավանդակը Ուրմիա լճից և Բոհթան գետից համարյա մինչև Լուրիսթանի տափարակները և երկու կողմից նրան հարող արևմուտքից Տիգրիսի և արևելքից Դիզֆալի գետահովիտները: Այս տարածքի մեջ են մտնում Սոուջբուլաղի մարզը, Արդելանը և Դիզֆալ գետի ավազանը մինչև Պարսկական Արաբստան, ինչպես նաև Հյուսիսային Միջագետքը կամ Մոսուլի վիլայեթը»[19]: *«Նշված սահմաններում են պարփակված,– շարունակում է նա,– քրդերով, նրանց ազգակից լեռնական ցեղերով, որոնք գերազանցապես իրանական ծագում ունեն, բնակեցված հողերը: Աշխարհագրական առումով ամբողջական այդ տարածքը լիովին համապատասխանում է նրա բնակիչների հովվական-քոչվորական կենսաձևին: Զագրոսի ալպերն իրենց գեղատեսիլ գահավանդակներով, որոնք ցածրանում են դեպի հիշյալ գետերի հովիտները, հնագույն ժամանակներից հովվական ցեղերի բնակավայր էին»*[20]:

---

[15] Лазарев, Мгои, Васильева, Гасратян, Жигалина. 1999.
[16] Sharafal-Din Bitlisi. 2005, 59.
[17] *Փոլադյան. 1999, 44–45:*
[18] *Մատթեոս Ուռհայեցի. 1991, 68–69, 156–157:*
[19] *Ադոնց. 2012, 102:*
[20] *Ադոնց. 2012, 103:*

«Թուրքիայի անդամահատումը» ուսումնասիրության մեջ վերտին անդրադառնալով Քրդստանի աշխարհագրական տեղադրման խնդրին, Ն. Ադոնցը գրում է. «Եթե արևելյան և արևմտյան Տիգրիսների բազուկների միախառնման վայրից, մոտավորապես Իբն-Ջեզայիրից ուղիղ գիծ անցկացվի մինչև Դամասկոս, ապա այդ գծից արևմուտք կմնան սիրիական հողերը՝ գերազանցապես քրիստոնեական, իսկ արևելք՝ Միջագետքի հարթավայրերից և Զագրոսի լեռնային մասից կազմված ընդարձակ տարածքը, բնակեցված քրդական և արաբական ցեղերով, ընդ որում հարթավայրերը գերազանցապես զբաղեցնում են արաբները, իսկ լեռները՝ քրդերը»[21]: Ավելի մանրամասնելով՝ նա հիշատակում է. «Տիգրիսից արևելք ընկած ամբողջ բարձրավանդակը, այսինքն Հաքյարի սանջաքը, Մոսուլի վիլայեթը (առանց Մոսուլի սանջաքի մի մասի) պարսկական հողերով հանդերձ, որոնք Ուրմիա լճից մինչև Լուրիսթան բնակեցված են քրդական ցեղերով, կկազմեն Քրդստանը: Սրա մեջ կմտնեն Սուլեյմանիի մարզը, Արդելանը և Դիզֆուլ գետի ավազանը մինչև Պարսկական Արաբստան»[22]:

Քրդստանի համար նման սահմաններ գծելիս Ն. Ադոնցն առաջնորդվում է ոչ միայն տվյալ տարածքային միավորում տիրապետող էթնիկական խմբի բնույթով, այլև նրա պատմամշակութային էությամբ և տնտեսական ամբողջականությամբ: Այսպիսով անվանի պատմաբանը քուրդ ժողովրդի բնօրրան է համարում Հյուսիսային Միջագետքը և Իրանի հյուսիսարևմտյան շրջանները, որոնք ընդունված է անվանել Իրանական Քրդստան: Այդ հանգամանքը հաստատվում է պատմական աղբյուրներով:

Աբբասյան խալիֆայության շրջանում քրդերի տարածման աշխարհագրական սահմաններն էլ ավելի էին ընդարձակվել[23]:

Քրդերը եղել են միջնադարյան վայրիվերումների, արյունահեղ պատերազմների, ապստամբությունների, խռովահույզ շարժումների անմիջական մասնակիցներ: Քուրդ ավատատերերն իրենց ջոկատներով արաբների կողմից մասնակցել են Բյուզանդիայի և խաչակիրների դեմ պատերազմներին, հավասարապես նաև Հայաստանը նվաճելու գործին: X դարից սկսած քրդական իրականության մեջ ձևավորվում է ռազմաքաղաքական մի ինստիտուտ՝ ամիրաների և ամիրայության (հայկական աղբյուրներում հաճախ այն հիշատակվում է էմիրություն ձևով), որն իր գոյությունը պահպանեց ընդհուպ մինչև XIX դարի կեսերը: Ամիրը կամ ամիրան իրենից ներկայացնում էր առանձին տարածքում բնակվող ցեղերի ռազմաքաղաքական առաջնորդը:

Ապացուցված իրողություն է, որ վաղ միջնադարում բուն հայկական լեռնաշխարհում քրդեր գոյություն չեն ունեցել: Նշված տարածքում քրդական էթնիկական տարրի առկայության մասին տեղեկություններ չկան ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում: Հավանական է համարվում, որ արաբական արշավանքների շրջանում արաբների նոր կրոնը՝ իսլամը, ընդունած քրդական մի շարք ցեղեր և կամ արաբական բանակներին զինվորա-

[21] Ա դ ո ն ց. 1996, 101–102:
[22] Ա դ ո ն ց. 1996, 102:
[23] Ibn-Hawqal, Abi Al-Qasim al-Nusuibi, Kitab Surat al ard. 1966, 506–507.

գրված քուրդ հավաքականություններ արշավող խալիֆայական բանակների հետ մուտք գործած լինեն Հայաստան՝ հաստատվելով նրա հարավային շրջաններում: Առկա է նաև քրդական ցեղերի Հայաստան ներթափանցման մեկ այլ եղանակ: Հայտնի է, որ ցեղերին բնորոշ էր մշտական հարաշարժությունը, իրենց անասունների համար՝ արոտավայրերի, ջրի աղբյուրների համար և այլն հավերժական որոնումները: Հենց դրանով, ինչպես նաև ժամանակի մի շարք ռազմաքաղաքական պայմանների պատճառով, մոտավորապես VIII դարից սկսած՝ ծայր է առել քրդական ցեղերի խոշոր մասշտաբների հասնող միգրացիոն շարժումներ ընդարձակ արաբական խալիֆայության տարբեր նահանգներ: X դարում, ի թիվս այլ ուղղությունների, նկատվում էր նաև քրդերի առանձին հավաքականությունների գաղթային շարժումներ դեպի հյուսիս՝ Հայաստանի կողմը: «Ժ դարի երկրորդ կեսին զուտ արաբ տարրը գրեթե բոլորովին չքացել էր Մեծ Հայքում,– գրում է արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանը,– բայց նրա փոխարեն մի նոր տարր հաստատվեց Հայկական լեռնաշխարհում՝ քրդերը, որոնք բոլորովին այլ պայմաններում եկան, քան արաբները: Արաբները մտան Հայաստան որպես նվաճողներ... Քրդերի մուտքը Հայաստան շատ անաղմուկ էր, ուստի դժվար է գտնել դրա սկիզբը»[24]:

Քրդական ցեղերը և ցեղային միությունները Հայաստան էին շարժվում գլխավորապես Հյուսիսային Միջագետքից՝ Մոսալի շրջանից և Տիգրիսի արևելյան ափերից ու հաստատվում Վասպուրականում, Աղձնիքում և այլ վայրերում. «Կորդուք և Տմորիք միաձուլվում էին հենց այն լեռնաշխարհի հետ, որը հետագայում Քուրդիսթան անունն ստացավ»[25]: Կորճայքից քրդերը սկսեցին տարածվել դեպի Աղձնիք՝ Խիզանի և Սղերդի կողմերը, ապա անցան Արզն և Նփրկերտ, իսկ հետագայում՝ Բաղեշի վրայով մտան Վանա լճի ավազան[26]: Մեծ Հայքի հարավարևմտյան շրջաններում հետզհետե վերաբնակվեցին քրդական ալ-համիդիյա (ալ-հումդիյա), ալ-բաշնավիյա և այլ ցեղեր, իսկ ալ-հաքքարիյա, ալ-բախթիյա ցեղերի մի մասը տարածվեց Անձևացյած գավառում[27]: Ավելի ուշ քրդական ցեղերը թափանցեցին նաև Հյուսիսային Հայաստան և հաստատվեցին Դվինի շրջակայքում, որտեղ Բագրատունիների օրոք ժամանակավոր իշխան դարձավ քուրդ ամիրա Մուհամմադ իբն-Շաղդադը (951–954): Ի դեպ, նա առաջին քուրդ ամիրան էր Մեծ Հայքում[28]:

Դվինի շրջանում հաստատվել էր առ-Ռավադիյա ցեղը, որը, ըստ արաբալեզու հեղինակների, քրդական հայտնի Հաղբանիյա ցեղային միության մի ճյուղն էր: Բացի այդ, արաբական ուժեղ ցեղերի հետ բախումներից պարտված կամ հակաարաբական ապստամբությունների ճախողման պատճառով քրդական ցեղերը հարկադրված էին որոնել բնակության նոր վայրեր:

Այսպիսով, ըստ էության, դեռևս մինչև Կենտրոնական Ասիայի թյուրքական ցեղերի զանգվածային տեղաշարժը դեպի Փոքր Ասիա, այդ թվում՝ նաև Արևմտյան Հայաստան, այդ գործը սկսել էին վաչկատուն քրդական ցեղերը: Արդեն X դարում Ջազիրայում, Ատրպատականում, Աղվանքում և Մեծ Հայ-

---

[24] Տեր-Ղևոնդյան. 1965, 191:
[25] Տեր-Ղևոնդյան. 1965, 191:
[26] Տեր-Ղևոնդյան. 1965, 193:
[27] Փոլադյան. 1999, 56:
[28] Տեր-Ղևոնդյան. 1965, 191:

քում ստեղծվել էին քրդական ամիրայական տներ: Այդ տներից առավել հայտնի էին Հասանվայհիների իշխանությունը (959–1095), որի հիմնադիրն էր քուրդ հզոր ավատատեր, Բարզիքանի ցեղի առաջնորդ Հասանվայհ իբն ալ-Քուրդին[29]: Առավել մեծ հզորության տեր էր Մարվանյանների՝ Բանու Մարվան ամիրայությունը (984–1083), որի տիրույթները տարածվում էին Դիարբեքիրի շրջանից մինչև Ջազիրա և Քերմանշահից մինչև Շահրեզուր[30]: Այդ ամիրայության կենտրոնը Մայաֆարեքինն էր (պատմական Նփրկերտը): Մեծ Հայքի հարավարևմտյան մասում մարվանյանները հիմնեցին մի ամիրայություն, որի հիմնադիրն էր Բաթը (Բաթ Աբու Աբդուլլահ իբն Դուսթաք ալ-Խարբութի): Այդ ամիրայության տիրապետությունը տարածվեց Արճեշի, Խլաթի, Նփրկերտի, Մանազկերտի, Աղձնիքի և Վանա լճի հյուսիսային ու արևմտյան կողմի գավառների վրա: 983 թ. մարվանյանները նվաճեցին նաև Ամիդը (Դիարբեքիր), Մծբինը (Նիսիբին) և Մոսուլը: Բաթը ասպատակեց նույնիսկ բյուզանդացիների ձեռքում գտնվող Տարոնը, կողոպտեց, կոտորեց ամբողջ գավառն ու ավարի մատնեց Մուշ քաղաքը[31]:

X դարի վերջերին ծնունդ է առնում Շադդադյանների ամիրայությունը (951–1088): Հիմնավորվելով Դվինում և Գանձակում՝ Շադդադյանները վերահսկում էին ողջ Հարավային Կովկասը, մասնավորապես՝ Արաքս և Քուր գետերի միջև ընկած տարածքը, ինչպես նաև Անատոլիայի, Իրանի և Հյուսիսային Իրաքի սահմանամերձ ողջ շրջանը: Այդ դինաստիայի մեկ այլ ճյուղը ընդհուպ մինչև XII դարի վերջը վերահսկում էր Անի քաղաքի շրջակայքը և Հայաստանի սահմանամերձ գոտին[32]:

Քրդերի ներթափանցումը Հայաստան

Քրդերի՝ դյուրին, անաղմուկ ու խաղաղ ներթափանցմանը Հայաստան, այսպիսով նպաստեց այն հանգամանքը, որ արաբական ամիրայական տները չկարողացան պահպանել իրենց գերիշխանությունը և նրանց տիրույթներն անցան ոչ թե երկրի բնիկ տերերին, այլ քրդական տարրերին: «Այն ճեղքվածքը,– գրում է Ա. Տեր-Ղևոնդյանը,– որ բաց էին արել արաբական ամիրայությունները Հայաստանում, նպաստեց քրդերի դյուրին ներթափանցմանը: Արաբ ամիրայական տները չկարողացան պահպանել իրենց գոյությունը, բայց նրանց տիրույթները ոչ թե վերանվաճվեցին երկրի բնիկ տերերի կողմից, այլ անցան քրդական տարրերի ձեռքը, որը իսլամացած և մասամբ արաբացած էր: Երկրի բնիկ իշխանները վերանվաճման որոշ փորձեր կատարեցին, բայց մեծ հաջողություն չունեցան, քանի որ Հայոց թագավորության մեջ չկար կենտրոնական ուժեղ իշխանություն»[33]:

Հայաստանի քրդական ամիրայություններն ու կողմնապետություններն իրենց ներքին կյանքում անկախ էին: Ամիրներն օժտված էին ոչ միայն հարկային, այլև վարչական ու դատական ինքնավարության իրավունքներով:

[29] Minorsky. 1913, 512–513.
[30] Minorsky. 1913, 512–513.
[31] *Մարվանյան ամիրայության մասին տե՛ս* Amedroz. 1903, 123–131.
[32] Minorsky. 1953.
[33] *Տեր-Ղևոնդյան. 1965, 191:*

Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր արքունիքը, որը կենտրոնական արքունիքի մանրանկար պատճենն էր: Կենտրոնական կառավարության պաշտոնյաները մուտք չունեին ինքնավար այս շրջաններում: Ամիրներն ինքնուրույն դատում էին հանցագործներին, նույնիսկ մահվան վճիռ արձակում և կամ դատը հանձնում շարի դատաստանին, որին մասնակցում էին տվյալ վայրի մահմեդական բարձրաստիճան հոգևորականները՝ ղադու գլխավորությամբ: Թովմա Մեծոփեցին պատմում է, որ ամիրայությունների կյանքում մեծ դեր էին կատարում նրանց երկրամասերում տեղակայված քոչվորական ցեղապետերը և շրջանների կառավարիչները[34]*:*

Ուշագրավ է, որ միջնադարյան աղբյուրներում վերոհիշյալ ամիրայությունները համարվում են ոչ թե քրդական, այլ արաբական[35]*: Անդրադառնալով այդ հարցին՝ Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է՝ քրդական ծագում ունեցող ամիրայական տները, որոնք գոյություն ունեին Հայաստանում վերջին Բագրատունիների օրոք, վերջին հաշվով արաբական ամիրայություններ էին: Նրանց օգտագործած գրական լեզուն արաբերենն էր: «Հայաստանի հողի վրա քուրդն ու արաբը, ինչպես նաև այլ մահմեդական տարրերը հանդես էին գալիս որպես միաձույլ ամբողջություն, ընդհանուր ճակատ կազմելով երկրի բնիկ հայ ազգաբնակչության դեմ: Եվ հայերենում «տաճիկ» արդեն նշանակում էր ոչ միայն «արաբ», այլև «մահմեդական» առհասարակ»*[36]*:*

Այդ նույն հարցի վերաբերյալ Ա. Փոլադյանը հայտնում է հետևյալ տեսակետը. «Քրդական այդ իշխանությունները իրենց կառուցվածքով, ինստիտուտներով և նկարագրով, անկասկած, մահմեդական-ժառանգական իշխանություններ էին, որոնք սերտորեն կապված էին արաբամահմեդական աշխարհի հետ: Արաբերենը հանդիսանում էր այդ իշխանությունների պաշտոնական և հաղորդակցության հիմնական լեզուն»[37]*:*

Ամիրայությունները, որոնք, ըստ էության, ավատատիրական ժամանակավոր միավորումներ էին, շլացուցիչ հաջողությունների հետ մեկտեղ ի վիճակի չէին երկար կյանք ունենալու: Ներքին հակասությունների, անվերջանալի և հյուծիչ երկպառակտությունների ու արտաքին հարձակումների հետևանքով աստիճանաբար թուլանում, անկում էին ապրում և, ի վերջո, մեկը մյուսի հետևից դադարում գոյություն ունենալուց:

Եզրակացություն

XI–XV դդ. շարունակվում էին քրդական ցեղերի գաղթային շարժումները, այդ թվում նաև դեպի հյուսիս՝ Հայաստանի կողմերը: Դրանք առավելապես պայմանավորված էին Մոսուլի, Դիարբեքիրի ու քրդաբնակ այլ շրջաններում տեղի ունեցող անընդհատ պատերազմներով, ավերածություններով և բնակչության սրածությամբ[38]*: Քրդական ցեղերը Տավրոսյան լեռնաշղթայի կողմերից հետզհետե տարածվում էին հայկական նահանգներում: Ի դեպ, XII դա-*

---

[34] *Մ ե ծ ո փ ե ց ի. 1999, XXVI:*

[35] J a m e s. 2006.

[36] *Տ ե ր-Ղ և ո ն դ յ ա ն. 1965, 192:*

[37] *Փ ո լ ա դ յ ա ն. 1999, 250:*

[38] B r u i n e s s e n. 1992, 137.

ում առաջին անգամ «Քրդստան» անվանումը, որպես աշխարհագրական անուն և ազգագրական միավոր, շրջանառության մեջ է մտել: Մատթեոս Ուռհայեցու կողմից «Քրդստան» երկրանվանման հիշատակումը համարվում է ամենահինը ողջ միջնադարյան բազմալեզու մատենագրության մեջ[39]*: Հետագայում այդ տերմինը հիշատակվում է XIV դարի պարսիկ պատմիչ Համդուլլահ Մոստուֆիի կողմից նրա «Նուզհաթ ալ-Քուլուբ» աշխատության մեջ*[40]*, ինչպես նաև նույն դարի պատմիչ Ռաշիդ ադ-դին Ֆազլուլլահ Համադանիի «Ջավան ութ-թամրիխ» աշխատությունում:*

Այդ բոլորով հանդերձ, ընդհուպ մինչև XVI դարը Հայաստանի տարածքում զանգվածային քուրդ բնակչություն չի եղել. բացակայում են տեղեկություններ ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում: Այդ հարցը հետաքրքրել է նաև Ն. Ադոնցին, որն իր մանրակրկիտ պրպտումներից հետո հանգել է հետևյալ եզրակացության. «Բացառությամբ Վանի և Բիթլիսի (քրդական – Վ. Բ.) իշխողների, որոնք գալիս են Թամուրի (Լենկ-Թեմուրի – Վ. Բ.) ժամանակներից, մնացյալ քրդական տիրույթները Հայաստանի նշված շրջաններում՝ Եփրատի երկայնքով և Տիգրիսի ակունքներում առաջացել են ավելի ուշ՝ թուրք-պարսկական պատերազմների ժամանակ XV–XVI դարերի սահմանագծին»[41]*:*

Վահան Բայբուրդյան – պ. գ. դ., պրոֆ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Իրանի և Թուրքիայի պատմություն, հայագիտության հարցեր, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմություն, քրդագիտություն, հայ գաղթօջախների պատմություն, միջազգային հարաբերություններ: Հեղինակ է 13 մենագրության և շուրջ 200 հոդվածի: vbayburdyan1933@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 2012, Երկեր, հ. Զ (լրացուցիչ հատոր): Հրապարակախոսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 540 էջ:

Դավրիժեցի Ա. 1990, Գիրք պատմութեանց, աշխատ.՝ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, ՀԳԱ հրատ., 592 էջ:

Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն. 1870, հ. Ա, ի Վաղարշապատ, ի տպ. սրբոց կաթողիկէ էջմիածնի, 87 էջ:

Թովմա Մեծոփեցի. 1999, Պատմագրություն (աշխատ.՝ Լևոն Խաչիկյանի), Երևան, «Մագաղաթ», 310 էջ:

Մատթեոս Ուռհայեցի. 1991, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Հր. Բարթիկյանի, Երևան, 540 էջ:

Մարգարյան Հ. 1992, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ. – ՊԲՀ, № 2–3, էջ 146–149:

Մարգարյան Հ. 2019, Քրդերը XII–XIII դարերի հայ մատենագրության մեջ. – Քրդագիտական հետազոտություններ, հ. I, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 244–245:

[39] *Ուռհայեցի. 1991, 68–69, 156–157:*

[40] Никитин. 1964, 72.

[41] *Ադոնց. 2012, 193:*

Փոլադյան Ա. 1999, Քրդերը Աբբասյան խալիֆայության ժամանակաշրջանում (X–XI դդ.), Երևան, «Զանգակ-97», 302 էջ:

Տեր-Ղևոնդյան Ա. 1965, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 311 էջ:

Лазарев М. С., Мгои Ш. Х., Васильева Е. И., Гасратян М. А., Жигалина О. И. 1999, История Курдистана. М., Ин-т востоковедения Рос. акад. наук, 261 с.

Поладян А. 1987, Курды в VII–X веках по арабским источникам. Ереван, Изд. АН АрмССР, 129 с.

Никитин В. 1964, Курды. М., «Прогресс», 226 с.

Amedroz H. F. 1903, The Marwanid Dynasty at Mayyafariqin in the Tenth and Eleventh Centuries A. D.- "Journal of the Royal Asiatic Society", January. Royal Asiatic Society, pp. 123–131.

Anthony D. S. 1991, The Nation: Invented, imagined, Reconstructed?.- "Millenium Journal of international Studies", vol. 20, no. 3, pp. 353–368.

Asatrian G. 2003, Prologomena to the Study of Kurds. – "Iran and Caucasus", vol. 13, pp. 1–58.

Bruinessen M. Van. 1992, Agha, Shaikh and State: The Social and Political Structures of Kurdistan. London, Zed Books, 373 p.

Eppel M. 2016, A People without a State. The Kurds from the Rise of Islam to the dawn of Nationalism. Austin, University of Texas Press, 188 p.

James B. 2006, Uses and Values of the Term Kurd in the Arabic Medieval Literary Sources. Seminar of the American University of Beirut (AUB), Center for Arab and Middle Eastern Studies (CAMES), April. Beyrouth, Lebanon.- http://halshs/archives-ourertesfr/halsis00350119.

Limbert J. 1968, The Origins and Appearance of the Kurds in Pre-Islamic Iran.- "Iranian Studies", vol. 1, no. 2, Cambridge University Press, pp. 41-51.

Minorsky V. 1913, Anazids. – "Encyclopaedia of Islam" (London), vol. I, pp. 512–513.

Minorsky V. 1940, Les origines des Kurdes.– "Actes du XX Congres International des Orientalistes" (ACIO). Bruxelles, S. 144–145.

Minorsky V. 1953, Studies in Caucasian History. London, Cambridge, 196 p.

Minorsky V. 1954, "Kurds". – "Encyclopaedia of Islam", 2 edition, vol. I. Leyden, pp. 1134–1135.

Ivanov V. 1940, The Gabri Dialect Spoken by the zoroastrians of Persia. Roma, Libreria di Scienze e Lettere, 164 p.

Ozoglu H. 2007, The Impact of Islam on Kurdish Idendity Formation in the Middle East. – "The Evolution of Kurdish Nationalism". Costa Mesa, Mazda Pub, 315 p.

Sharaf al-Din Bitlisi. 2005, The Sharafname, or the History of the Kurdish Nation, Book 1, Translation into English and commentaries by M. R. Irady. Costa Mesa.

Nöldeke Th. 1898, Kurdü und Kurden. In.: Beitrage zur alten Geschichte und Geographie für H. Kilepert. Berlin, S. 78–79.

Ibn-Hawqal, Abi Al-Qasim al-Nusuibi, Kitab Surat al ard. 1979, Beirut, pp. 239–241.

Ibn al-Athir, Al Kamil fi al-Ta'rikk, vol. 6, Beirut, 1966, pp. 506–507.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИИ КУРДОВ И КУРДИСТАНА СРЕДНЕВЕКОВОЙ ЭПОХИ В КРИТИЧЕСКОМ СВЕТЕ

ВААН БАЙБУРТЯН

Р е з ю м е

Ключевые слова: курды, халифат, востоковед, Ураеци, Тигрис, Армения.

История курдов средневековой эпохи изучена сравнительно плохо. Основная причина этого – недостаточность или почти полное отсутствие источников. Средневековые арабские источники приводят данные об истории курдов только начиная с эпохи Омеядского халифата (661–750 гг.). По этому вопросу более ранние упоминания не дошли до нас, вероятно, по причине отсутствия. Из средневековых армянских авторов Маттеос Ураеци является первым автором, который в своем труде под названием «Хронология» упоминает этническое название «курд». В дальнейшем, начиная с XII века, этноним «курд» регулярно употребляется в армянских источниках.

В период раннего средневековья на территории Армении отсутствовали следы курдского населения. Только начиная с VIII века, когда начались миграционные движения курдских племен в разные части обширного арабского халифата, в числе разных направлений, начиная с X века, начались миграционные движения курдских племен также в северном направлении, то есть, в сторону Армении. Этот процесс продолжался и в дальнейшем, в течение последующих веков. Однако все же вплоть до XVI века на территории Армении отсутствовало массовое курдское население. Только в указанном столетии, благодаря прокурдской политике Османской империи, проникновение курдского населения в Западную Армению приняло массовый характер.

Ваан Байбуртян – д. и. н., проф., ведущий научный сотрудник отдела Ирана Института востоковедения НАН РА. Научные интересы: история Ирана и Турции, вопросы арменоведения, история стран Ближнего и Среднего Востока, курдоведение, история армянских поселений, международные отношения. Автор 13 монографий и около 200 статей.
vbayburdyan1933@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 2

SEVERAL ISSUES SHEDDING LIGHT ON THE HISTORY OF KURDS AND KURDISTAN IN THE MEDIEVAL PERIOD

VAHAN BAIBOURTIAN

S u m m a r y

Keywords: Kurds, Caliphate, orientalist, Urhaetsi, Tigris, Armenia.

The medieval period of the Kurdish people is relatively less studied. The main reason for this is the scarcity or almost complete absence of sources. The Arabic medieval sources referred to the history of kurds since the period of Umayyad Caliphate (661–750 CE). Earlier references, on this issue, have not come down to us, probably, due to their lack.

Among the medieval Armenian authors, Matteos Urhaetsi was the first to mention ethnic name "kurd" in his "Chronicle". In the future, beginning from the XII century, the ethnonym "kurd" was regularly used in the Armenian sources.

In the early Middle Ages, there were no traces of Kurdish population in the territory of Armenia. Only starting from the VIII century, when Kurdish tribes began to migrate to different parts of the vast Arab Caliphate, starting from the tenth century, Kurdish tribes, along with other directions, headed north, that is, towards Armenia.

This process continued in the consequent centuries. Nevertheless, the mass Kurdish population was nonexistent in the Armenian territory until the sixteenth century. Only due to pro-kurdish policy of the Ottoman Empire in the mentioned century, penetration of the Kurdish tribes into Western Armenia took on a mass character.

Vahan Baibourtian – Doctor of Historical Sciences, Professor, Leading Researcher at the Iran Department of the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Scientific interests: history of Iran and Turkey, issues of Armenian studies, history of Near and Middle Eastern countries, Kurdish studies, history of Armenian settlements, international relations. Author of 13 monographs and about 200 articles. vbayburdyan1933@gmail.com